ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

«05» 02 2024 թ.

№ [illegible]

«Իվաֆարմ» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 08625799
ՀՀ, ք. Սևան, Նաիրյան 168, բն.23,
հեռ. +374 98 44 88 56
էլ. հասցեն՝ Ivapharm89@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Իվաֆարմ» ՍՊ ընկերության միջև 26.01.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-9/4-3 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 12.04.2023թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Իվաֆարմ» ՍՊ ընկերությունը 2023թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 3,850 հատ ցեֆոտաքսիմ (ցեֆոտաքսիմ նատրիում) cefotaxime (cefotaxime sodium), որոնց մասով Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից 2,350 հատ ապրանքի մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. փետրվարի 5-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «Իվաֆարմ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 184,047 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 19.12.2023թ. և 52,899 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 1,228,150 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 1,124,475 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. փետրվարի 14-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1,228,150 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 1,124,475 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Իվաֆարմ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. փետրվարի 14-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ